



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԴԵԿԱՎԱՐ**

0010 ք. Երևան, Կառավարական տուն 1

№ 02/05.1/37383-2021

**ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԴԵԿԱՎԱՐ-ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ
ՊԱՐՈՆ ՎԱՀԱՆ ՆԱՐԻԲԵԿՅԱՆԻՆ**

Հարգելի պարոն Նարիբեկյան

Համաձայն «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 66-րդ և 77-րդ հոդվածների՝ Ձեզ ենք ներկայացնում՝

1) «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում լրացում կատարելու մասին» և «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի (Պ-056-30.09.2021-ՊԻ-011/0) վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության առաջարկությունները,

2) Հայաստանի Հանրապետության վարչապետի 2021 թվականի հոկտեմբերի 27-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ (հարակից զեկուցող) նշանակելու մասին» N 1210 - Ա որոշումը:

**ԱՐԱՅԻԿ
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

Կատարող՝ Պ. Քացախյան

Հեռ. 010515686

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ
ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՎ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵ-
ՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱ-
ՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔՆԵԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ (Պ-056-30.09.2021-ՊԻ-011/0) ՎԵՐԱԲԵՐ-
ՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

«Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագծով (այսուհետ՝ նախագիծ) առաջարկվում է Հայաստանի Հանրապետության 2003 թվականի ապրիլի 18-ի ՀՕ-528-Ն քրեական օրենսգրքի (այսուհետ՝ օրենսգիրք) 28-րդ գլուխը լրացնել հետևյալ բովանդակությամբ 307.5-րդ հոդվածով՝

«Հոդված 307.5. Ազգային ժողովի քննիչ հանձնաժողովներին կեղծ կամ սուտ տեղեկություններ հայտնելը կամ տրամադրելը

1. Ազգային ժողովի քննիչ հանձնաժողովին կեղծ կամ սուտ տեղեկություններ հայտնելը կամ տրամադրելը՝

պատժվում է ազատազրկմամբ՝ հինգից յոթ տարի ժամկետով:

2. Պաշտպանության և անվտանգության բնագավառներում քննիչ հանձնաժողովին կեղծ կամ սուտ տեղեկություններ հայտնելը կամ տրամադրելը՝

պատժվում է ազատազրկմամբ՝ ութից տասներկու տարի ժամկետով:»:

Որպես առաջարկվող լրացման հիմնավորում՝ նշված է այն, որ Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 108-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Պատգամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ քառորդի պահանջով, Ազգային ժողովի իրավասության մեջ մտնող և հանրային հետաքրքրություն ներկայացնող հարցերին վերաբերող փաստերը պարզելու և դրանք Ազգային ժողով ներկայացնելու նպատակով, իրավունքի ուժով ստեղծվում է Ազգային ժողովի քննիչ հանձնաժողով:»: Սահմանադիրը, նշելով հանրային հետաքրքրություն տերմինը, արդեն իսկ կանխորոշել է, որ դրանք խիստ կարևոր և առանցքային հարցեր պետք է լինեն, ինչով էլ պայմանավորված առաջանում է բացառապես ճշմարտությունը բացահայտելու առաքելությունը, որն էլ, սակայն, անհնարին կլինի առանց ճշմարիտ փաստերի և դրանց օբյեկտիվ և համակողմանի ուսումնասիրության: Անհրաժեշտություն է առաջանում նախատեսել սանկցիա, որը քննիչ հանձնաժողովի կողմից իրավիրված անձանց ոչ միայն կստիպի ներկայանալ հանձնաժողովին, այլև ներկայացնել միմիայն և բացառապես ճշմարտությունը: Միաժամանակ, որակյալ հանցակազմի նախատեսման հիմնավորում է նշված այն, որ դա պայմանավորված է պաշտպանության և անվտանգության բնագավառում քննիչ հանձնաժողովի կողմից քննվող հարցերի կարևորությամբ:

Այդ կապակցությամբ հայտնում ենք հետևյալը.

1. Առաջարկվող լրացման դեպքում քրեական պատասխանատվություն է սահմանվում Ազգային ժողովի քննիչ հանձնաժողովին կեղծ կամ սուտ տեղեկություններ հայտնելու կամ տրամադրելու համար: Առկա ձևակերպման դեպքում ստացվում է, որ հայտնած կամ տրամադրված ցանկացած կեղծ կամ սուտ տեղեկություն, անկախ դրա

էական լինելուց կամ կազմվելիք եզրակացության համար ունեցած նշանակությունից, առաջացնում է քրեական պատասխանատվություն, որի համար նախատեսված է բացառապես ազատազրկման ձևով պատիժ:

Ուսումնասիրելով օրենսգրքի 338-րդ, 338.1-ին հոդվածների կարգավորումները՝ պետք է արձանագրել, որ դրանք սահմանում են խրախուսական նորմ առ այն, որ անձը ենթակա չէ քրեական պատասխանատվության, եթե իր արարքը նշանակություն չէր կարող ունենալ գործի լուծման համար կամ մինչև ակտ կայացնելը կամովին հայտնել է իր տված սուտ ցուցմունքի մասին: Ինչ վերաբերում է Հայաստանի Հանրապետության քրեական նոր օրենսգրքի (ընդունվել է 2021 թվականի մայիսի 5-ին, ուժի մեջ է մտնելու 2022 թվականի հուլիսի 1-ին) կարգավորումներին՝ անհրաժեշտ է նշել, որ սուտ ցուցմունք, կեղծ եզրակացություն կամ կեղծ կարծիք տալը կամ սխալ թարգմանություն կատարելու հանցակազմը սահմանող հոդվածի հենց դիսպոզիցիայում է նշված գործի համար նշանակություն ունենալու կամ գործի կամ վարույթի ընթացքը խաթարելու պահանջը:

Վերոգրյալի լույսի ներքո՝ կարծում ենք, որ քննիչ հանձնաժողովին հայտնած կեղծ կամ սուտ տեղեկությունների համար քրեական պատասխանատվությունը պետք է պայմանավորել քննության համար այդ տեղեկությունների էական լինելու հանգամանքով:

2. Առաջարկվող սանկցիաների վերաբերյալ հարկ է նշել, որ նախատեսված են բավականին ծանր պատիժներ, միննույն ժամանակ, բավարար չափով պատճառաբանված չէ այդպիսի սանկցիաների նախատեսման անհրաժեշտությունը, ինչպես նաև հիմնավորված չէ, թե ինչու ավելի մեղմ պատիժները չեն կարող սույն դեպքում ծառայել պատժի նպատակների իրացմանը:

Լրացվող հոդվածի 1-ին մասը պատասխանատվություն է սահմանում Ազգային ժողովի քննիչ հանձնաժողովին կեղծ կամ սուտ տեղեկություններ հայտնելու կամ տրամադրելու համար, որն իր հանրային վտանգավորությամբ առավել մոտ է օրենսգրքի 338-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցակազմում թվարկվող արարքներին: Քննարկվող երկու հանցակազմերի դեպքում էլ սուտ կամ կեղծ տեղեկություններ հայտնողը սխալ ճանապարհի վրա է դնում իրականացվող քննությունը, այդպիսով՝ խոչընդոտելով դրա պատշաճ ընթացքը, ինչպես նաև նպաստում է պետական միջոցների չհիմնավորված սպառմանը: Հաշվի առնելով, որ Նախագծով առաջակվող հանցակազմի դեպքում տեղեկությունները հայտնվում են պետության ներկայացուցչական բարձրագույն մարմնի հանձնաժողովին՝ պետք է արձանագրել, որ այս դեպքում արարքի հանրային վտանգավորությունը որոշակի, բայց ոչ էականորեն, ավելի մեծ է, քան քննություն իրականացնող մյուս մարմիններին կեղծ տեղեկատվություն տրամադրելու դեպքում: Սակայն, օրենսգրքի 338-րդ հոդվածի 1-ին մասի սանկցիան որպես առավելագույն պատիժ է սահմանում երկու տարի ժամկետով ազատազրկումը, ի տարբերություն լրացմամբ առաջարկվող հոդվածի 1-ին մասի սանկցիայի, որը որպես պատիժ է սահմանում հինգից յոթ տարի ժամկետով ազատազրկումը: Այսինքն ստացվում է, որ թեև քննարկվող հանցակազմերում թվարկված արարքների հանրային վտանգավորությունը գրեթե նույնական է, կամ քննիչ հանձնաժողովին կեղծ տեղեկություններ տալով դրսևորվող արարքինը որոշակի ավելի մեծ է, սակայն դրանց համար նախատեսված քրեական պատասխանատվությունը բավականին տարբեր է: Հետևաբար, գտնում ենք, որ նախագծով առաջարկվող հոդվածի 1-ին մասի սանկցիան պետք է հնարավորինս մոտեցնել

օրենսգրքի 338-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցակազմի սանկցիային՝ հաշվի առնելով հանցավոր արարքների հանրային վտանգավորությունը, ինչպես նաև պատիժ նշանակելու համաչափության սկզբունքի ապահովումը:

Միաժամանակ, կարծում ենք, որ անհրաժեշտ է սահմանել նաև ազատազրկման հետ չկապված պատժի նշանակման հնարավորություն:

Անդրադառնալով նախագծով առաջարկվող հոդվածի 2-րդ մասով նախատեսված հանցակազմի համար սահմանվող սանկցիային՝ պետք է արձանագրել, որ այն որպես պատիժ է նախատեսում ութից տասներկու տարի ժամկետով ազատազրկումը, այդպիսով քննարկվող արարքը դիտելով որպես առանձնապես ծանր հանցագործություն:

Ուսումնասիրելով օրենսգրքի հատուկ մասում նախատեսված սանկցիաները՝ պետք է արձանագրել, որ ութից տասներկու տարի ժամկետով ազատազրկում է նախատեսվում այնպիսի հանցագործությունների համար, ինչպիսիք են՝ հանցավոր համագործակցություն ստեղծելը կամ հանցավոր համագործակցություն ղեկավարելը, մարտի ժամանակ մարտադաշտն ինքնակամ լքելը կամ զենքով գործելուց հրաժարվելը, մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ ահաբեկչություն կատարելը և այլն:

Չվիճարկելով պաշտպանության և անվտանգության բնագավառներում Ազգային ժողովի քննիչ հանձնաժողովին կեղծ կամ սուտ տեղեկություններ հայտնելու կամ տրամադրելու հանրային վտանգավորության բարձր աստիճանը՝ միաժամանակ, պետք է արձանագրենք, որ այն իր հանրային վտանգավորությամբ էականորեն զիջում է վերը նշված հանցագործություններին, որպիսի պարագայում դրանց համար նույնական պատիժների սահմանումը չի կարող արդարացի համարվել:

Կարծում ենք, որ առաջարկվող հանցակազմի հանրային վտանգավորությունը առավել մոտ է օրենսգրքի 338-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված՝ ծանր կամ առանձնապես ծանր հանցագործության մեջ մեղադրանքի առնչությամբ տրված սուտ ցուցմունքի ձևով դրսևորվող արարքի հանրային վտանգավորությանը, հետևաբար, նշված մասի սանկցիան պետք է հնարավորինս մոտեցնել քննարկվող հոդվածի սանկցիային, այն է՝ ազատազրկում՝ առավելագույնը հինգ տարի ժամկետով:

3. Առաջարկվող լրացման հիմնավորումներից պարզ է դառնում, որ այն ուղղված է «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 22-րդ հոդվածի 1-ին և 1.1-ին մասերով նախատեսված անձանց կողմից բացատրություններ տալու և/կամ հանձնաժողովի անդամների հարցերին պատասխանելու պարտականությունների պատշաճ կատարմանը: Միաժամանակ, առաջարկվող հոդվածի դիսպոզիցիան չի կոնկրետացնում դրանով սահմանված հանցակազմի սուբյեկտների շրջանակը, որպիսի պարագայում ստացվում է, որ այն տարածվում է և՛ պաշտոնատար անձանց նկատմամբ, և՛ այլ անձանց նկատմամբ՝ այն դեպքում, երբ նրանք իրացնելով իրենց իրավունքը, հանձնաժողովի հրավերով ներկայանում, տալիս են բացատրություն կամ պատասխանում հանձնաժողովի անդամների հարցերին:

Հաշվի առնելով, որ նախատեսվում է քրեական պատասխանատվություն սահմանել քննիչ հանձնաժողովին կեղծ կամ սուտ տեղեկություններ հայտնելու կամ տրամադրելու համար՝ անհրաժեշտություն է առաջանում տեղեկություններն ընդունող մարմնի համար սահմանել քրեական պատասխանատվության հնարավորությունն անձին պարզաբանելու պահանջ: Ուսումնասիրելով նախագծով առաջարկվող լրացման հետ որոշակի ընդհան-

րություններ ունեցող օրենսգրքի 338-րդ հոդվածով սահմանված հանցակազմի հետ կապված կարգավորումները՝ կարող ենք արձանագրել հետևյալը.

Նշված հոդվածը քրեական պատասխանատվություն է սահմանում քաղաքացիական կամ վարչական դատավարության գործով սուտ ցուցմունք տալու, քրեական գործով վկայի կամ տուժողի կողմից սուտ ցուցմունք տալու, քրեական կամ քաղաքացիական կամ վարչական դատավարության գործով փորձագետի կողմից ակնհայտ կեղծ եզրակացություն տալու, քաղաքացիական դատավարության գործով մասնագետի կողմից ակնհայտ կեղծ բացատրություն տալու, թարգմանչի կողմից ակնհայտ սխալ թարգմանություն կատարելու, նոտարի կողմից իրավաբանական նշանակություն ունեցող փաստ հաստատելու գործով վկայի կողմից սուտ ցուցմունք տալու համար: Միևնույն ժամանակ, քննարկվող պարտականությունների պատշաճ կատարումն ապահովելու համար օրենսդիրը տեղեկությունները ստացող սուբյեկտների համար պարտականություն է սահմանել տեղեկություններ տրամադրողներին պարզաբանել դրանց կեղծ կամ սուտ լինելու դեպքում քրեական պատասխանատվության սպառնալիքի մասին: Նման պահանջ է նախատեսված Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքով, Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով և «Նոտարիատի մասին» օրենքով:

Առկա պայմաններում քննիչ հանձնաժողովին տեղեկատվություն տվող անձանց իրավունքների պաշտպանության նպատակով անհրաժեշտ է «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքում կատարել լրացում և քննիչ հանձնաժողովի համար պարտականություն սահմանել պաշտոնատար անձանց նախազգուշացնել քննիչ հանձնաժողովի հրավերով ներկայանալու, բացատրություններ տալու և հանձնաժողովի անդամների հարցերին պատասխանելու պարտականության և դրանց չկատարման դեպքում քրեական պատասխանատվության մասին, իսկ այլ անձանց պարզաբանել քննիչ հանձնաժողովի հրավերով ներկայանալու, բացատրություններ տալու և հանձնաժողովի անդամների հարցերին պատասխանելու իրավունքի մասին, ինչպես նաև նախազգուշացնել նշված իրավունքների իրացման դեպքում հանձնաժողովին կեղծ կամ սուտ տեղեկություններ հայտնելու կամ տրամադրելու դեպքում քրեական պատասխանատվության մասին:

Ամփոփելով վերոշարադրվածը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը գտնում է, որ ներկայացված դիտարկումների հիման վրա օրենքի նախագիծն անհրաժեշտ է լրամշակել:

«Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագծի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարությունը առաջարկություններ չունի:



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ
Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

N 1210 - Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ (ՀԱՐԱԿԻՑ ՔԵԿՈՒՑՈՂ) ՆՇԱՆԱԿԵԼՈՒ
Մ Ա Ս Ի Ն**

Հիմք ընդունելով «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 66-րդ հոդվածի 2-րդ մասը՝

Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի ստացին տեղակալ Քրիստինեն Գրիգորյանին նշանակել Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում լրացում կատարելու մասին» և «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերը (Պ-056-30.09.2021-ՊԻ-ՕՈՎՕ) քննարկելիս Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ (հարակից զեկուցող):

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ**

Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

27.10.2021
ՀԱՅԱՍՏԱՆԻ
ԷԼԵԿՏՐՈՆԱԿԱՆ
ՆՇՈՒՄԿՐՈՒԹՅԱՆ

Պ-056-30.09.2021-ՊԻ-011/0

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ**

ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. Հայաստանի Հանրապետության 2003 թվականի ապրիլի 18-ի ՀՕ-528-Ն քրեական օրենսգիրքը լրացնել նոր՝ 307.5 հոդվածով հետեւյալ խմբագրությամբ.

Հոդված 307.5 Ազգային ժողովի քննիչ հանձնաժողովներին կեղծ կամ սուտ տեղեկություններ հայտնելը կամ տրամադրելը

1. Ազգային ժողովի քննիչ հանձնաժողովին կեղծ կամ սուտ տեղեկություններ հայտնելը կամ տրամադրելը՝

պատժվում է՝ ազատազրկմամբ հինգից յոթ տարի ժամկետով:

2. Պաշտպանության եւ անվտանգության բնագավառներում քննիչ հանձնաժողովին կեղծ կամ սուտ տեղեկություններ հայտնելը կամ տրամադրելը՝

պատժվում է ազատազրկմամբ՝ ութից տասներկու տարի ժամկետով:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Պ-056՝-30.09.2021-ՊԻ-011/0

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ**

ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. Հայաստանի Հանրապետության 1998 թվականի հուլիսի 1-ի ՀՕ-248-Ն քրեական դատավարության օրենսգրքի 190-րդ հոդվածի 3-րդ մասում «307» բառից հետո լրացնել «307.5» բառը:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Հիմնավորում

Նախագծի ընդունման անհրաժեշտության վերաբերյալ

Նախագծի ընդունման նպատակը.

Նախագծով առաջարկվում է քրեականացնել Ազգային ժողովի քննիչ հանձնաժողովներին կեղծ կամ սուտ տեղեկություններ հայտնելը կամ տրամադրելը: Ազգային ժողովի քննիչ

հանձնաժողովները եւ նրանց գործունեությունը երաշխավորված է թե՛ ՀՀ Սահմանադրությամբ, թե՛ Ազգային ժողովի կանոնակարգ սահմանադրական օրենքով: Առհասարակ, քննիչ հանձնաժողովները խորհրդարանական կառավարման համակարգի եւ խորհրդարանական վերահսկողության կարելորագույն գործիք են: ՀՀ Սահմանադրության 108-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն «Պատգամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ քառորդի պահանջով, Ազգային ժողովի իրավասության մեջ մտնող եւ հանրային հետաքրքրություն ներկայացնող հարցերին վերաբերող փաստերը պարզելու եւ դրանք Ազգային ժողով ներկայացնելու նպատակով, իրավունքի ուժով ստեղծվում է Ազգային ժողովի քննիչ հանձնաժողով:» Սահմանադիրը, նշելով հանրային հետաքրքրություն տերմինը, արդեն իսկ կանխորոշել է, որ դրանք խիստ կարելի եւ առանցքային հարցեր պետք է լինեն, ինչով պայմանավորված էլ առաջանում է բացառապես ճշմարտությունը բացահայտելու առաքելությունը, որն էլ, սակայն անհնարին կլինի առանց ճշմարիտ փաստերի եւ դրանց օբյեկտիվ եւ համակողմանի ուսումնասիրության: Հատկանշական է, որ հենց այս նպատակով էլ ՀՀ Ազգային ժողովի կանոնակարգ սահմանադրական օրենքի 22-րդ հոդվածի 1 եւ 1.1 մասերի համաձայն՝

1. Քննիչ հանձնաժողով հրավիրված պաշտոնատար անձինք պարտավոր են, իսկ հանձնաժողովի իրավասության ոլորտին վերաբերող տեղեկություններ ներկայացրած այլ անձինք իրավունք ունեն ներկայանալու եւ բացատրություններ տալու հանձնաժողովի նիստում, ինչպես նաեւ պատասխանելու հանձնաժողովի անդամների հարցերին:

1.1 Սույն հոդվածի 1-ին մասում նշված պաշտոնատար անձանց՝ հանձնաժողով ներկայանալու եւ բացատրություններ տալու, ինչպես նաեւ հանձնաժողովի անդամների հարցերին պատասխանելու պարտականությունը պահպանվում է նաեւ նրանց պաշտոնից ազատվելուց հետո, եթե տեղեկատվության տրամադրման պահանջը կամ նիստին ներկայանալու եւ բացատրություններ տալու հրավերն ստացվել է մինչեւ պաշտոնից ազատվելը:

Մինչդեռ ինքնին ներկայանալու իմպերատիվ պահանջը ինքնին բավարար չէ ճշմարտության բացահայտման եւ ներկայացման համար. Հիփոթեզի եւ դիսպոզիցիայի առկայության դեպքում բացակայում է համապատասխան սանկցիան, որը քննիչ հանձնաժողովի կողմից հրավիրված անձանց ոչ միայն կստիպի ներկայանալ հանձնաժողովին, այլեւ ներկայացնել միմիայն եւ բացառապես ճշմարտությունը: Հակառակ դեպքում քննիչ հանձնաժողովների գործունեությունը կվերածվի իրականությունից եւ հանրային հետաքրքրության շրջանակում գտնվող հարցերից շեղելու գործիքի:

Միաժամանակ, տարբերակում է դրվել քննիչ հանձնաժողովներին եւ Պաշտպանության եւ անվտանգության բնագավառներում քննիչ հանձնաժողովին կեղծ կամ սուտ տեղեկություններ տրամադրելու միջեւ, ինչը պայմանավորված է կրկին Սահմանադրության եւ Ազգային ժողովի կանոնակարգ սահմանադրական օրենքի իմպերատիվ եւ տարբերակիչ մոտեցումներով: Մասնավորապես՝ պաշտպանության եւ անվտանգության հարցերին վերաբերող դեպքերում քննիչ հանձնաժողով չի ստեղծվում, այլ դրա լիազորությունները փոխանցվում են Ազգային ժողովի իրավասու մշտական հանձնաժողովին: Հատկանշական է, որ այս դեպքերում չի փոխվում նաեւ հանձնաժողովի կազմը:

Տարբերակման մյուս հիմնավորումը այն հարցերի շրջանակն են, որոնք ենթակա են քննության պաշտպանության եւ անվտանգության իրավասու հանձնաժողովի կողմից՝ դրա քննիչ հանձնաժողովի լիազորություններ ստանձնելու դեպքում: Պայմանավորված այդ հարցերի ոչ միայն հանրային, այլեւ պետության, դրա անվտանգության եւ պաշտպանության տեսանկյունից կարելորության, նպատակահարմար է սահմանել առավել խիստ սանկցիա այդ հանձնաժողովին կեղծ կամ սուտ տեղեկություններ տրամադրելու դեպքերի համար, ինչը կունենա պրեվենտիվ նշանակություն հնարավոր հանցավոր վարքագծի նկատմամբ եւ միաժամանակ կնպաստի արդարության եւ իրականության ամբողջական եւ համակողմանի ուսումնասիրությանն ու բացահայտմանը: Պատահական չէ նաեւ, որ նման նախաձեռնություն իրականացվում է այս ժամանակահատվածում եւ նախկինում նման առանցքային անհրաժեշտություն առաջացած չի եղել:

Պատճառը 2020 թվականի սեպտեմբերի 27-ից, մինչև 2020 նոյեմբերի 9-ը տեղի ունեած 44-օրյա պատերազմն էր եւ դրա հանգամանքների համակողմանի ուսումնասիրման վերաբերյալ հայտարարված քննիչ հանձնաժողովի ձեւավորման հանգամանքն է: Պետք է նկատել, որ նշված պատերազմի արդյունքում Հայ ժողովրդի հազարավոր Հերոս զինվորական ծառայողներ մարտիրոսվել են, սակայն հանրության մեջ առկա է հիմանավոր կասկած առ այն, որ նշված պատերազմից հնարավոր էր խուսափել, կամ հնարավոր էր ավելի վաղ դադարեցնել որի պայմաններում զոհված, թշնամու կողմից սպանված զինվորների կյանքը հնարավոր կլիներ փրկել եւ կանխել նման իրավիճակը: Այս հանգամանքների վերաբերյալ ցանկացած ոչ հավաստի կամ ոչ լրիվ ճշմարիտ, առավելեւս սուտ կամ կեղծ տեղեկություններ հայտնելը նման պայմաններում իրենից ներկայացնում են չափազանց բարձր հանրային վտանգավորության աստիճան որով պայմանավորված է հենց քրեական քաղաքականության նման խիստ մոտեցումը: Պատահական չէ, որ 44-օրյա պատերազմի հետեւանքների կամ դրանից «դասեր քաղելու» կարեւորության մասին նշվում է նույնիսկ կառավարության ծրագրի մեջ, հետեւաբար կանխատեսելի է, որ նման նախաձեռնության եւ բացառապէս ճիշտ եւ իրական տեղեկության ստացումը պետք է լինի ելակետային բոլոր կողմերի համար: Գտնում ենք, որ քրեական քաղաքականության նման մոտեցումը կարող է միակ արդյունավետ մեխանիզմ եւ երաշխիքը հանդիսանալ հատկապէս Պաշտպանության եւ անվտանգության բնագավառներում քննիչ հանձնաժողովի գործունեության հանրային վստահության եւ ճշմարտության բացահայտման առաքելության իրացման տեսանկյունից:

Միաժամանակ, պայմանավորված այդ արարքների հանրային վտանգավորությամբ եւ սուբյեկտային առնչությամբ, անհրաժեշտ է տվյալ գործերի համար նախաքննության մարմին սահմանել ազգային անվտանգության մարմնի քննիչներին, քանի որ ամբողջ իրավահարաբերություններն ուղղակիորեն փոխկապակցված են ՀՀ ազգային անվտանգության հետ:

Նախագծով առաջարկվող փոփոխությունները

Նախագծով առաջարկվում է քրեականացնել Ազգային ժողովի քննիչ հանձնաժողովին կեղծ կամ սուտ տեղեկություններ հայտնելը կամ տրամադրելը եւ այդ արարքի կատարման համար նախատեսել հինգից յոթ տարի ժամկետով ազատազրկումը՝ որպէս պատիժ, ինչպէս նաեւ սահմանել 8-12 տ ազատազրկում, եթե կեղծ կամ սուտ տեղեկություններ տրամադրվել են պաշտպանության եւ անվտանգության բնագավառներում գործող քննիչ հանձնաժողովին:

Նախագծի փաթեթով՝ քրեական դատավարության օրենսգրքում նախատեսված լրացմամբ առաջարկվում է սույն գործերով նախաքննության մարմին սահմանել ՀՀ ազգային անվտանգության մարմիններին:

Նախագծով նպատակը

Նախագծի ընդունման դեպքում հնարավորինս կնվազի քննիչ հանձնաժողովներին եւ դրանցից առանձնահատուկ կարգավիճակ եւ կանոնակարգումներ ունեցող պաշտպանության եւ անվտանգության ոլորտի քննիչ հանձնաժողովին կեղծ կամ սուտ տեղեկությունների տրամադրումը, ինչով էլ քննիչ հանձնաժողովների աշխատանքը եւ զեկույցը կլինի հանգամանալից եւ ճշմարտացի՝ արտահայտելով բացառապէս իրական եւ փաստերի վրա հիմնված օբյեկտիվ իրականությունը, իսկ դրանից շեղվելու փորձեր կատարողները, այդ թվում միջամտության, կեղծ կամ սուտ տեղեկության տրամադրման մասով կենթարկվեն քրեական պատասխանատվության, դրանով իսկ ապահելով նման արարքների կանխարգելման քրեաիրավական նպատակը: